

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՎԱՐԱՋԴԱՏ ՀՈՎԻԿԻ

**ՕՐԵՆՔՈՎ ՊԱՀՊԱՆՎՈՂ ԳԱՂՏՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**ԺԲ.00.04 - «Դատական իրավունք - դատարանակազմություն,
քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն,
կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն,
օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն»
ՍԵՂՄԱԳԻՐ**

Երևան-2020

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ

СУКИАСЯН ВАРАЗДАТ ОВИКОВИЧ

**ПРОБЛЕМЫ ЗАЩИТЫ ОХРАНЯЕМОЙ ЗАКОНОМ ТАЙНЫ В УГОЛОВНОМ
ПРОЦЕССЕ РА**

АВТОРЕФЕРАТ

**диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по
специальности 12.00.04 – Судебное право (судоустройство, гражданский
процесс, уголовный процесс, криминалистика, судебная экспертиза,
адвокатура, теория оперативно-розыскной деятельности)**

Ереван-2020

Ատենախոսության թեման հաստատվել է Հայ-Ռուսական համալսարանում

Գիտական ղեկավար՝

**իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր Լ.Ձ. Թադևոսյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

**իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր Ս. Ա. Դիլբանդյան
իրավաբանական գիտությունների
թեկնածու Հ.Գ. Ավետիսյան**

Առաջատար կազմակերպություն՝

«Հ ոստիկանության կրթահամալիր

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2020 թվականի դեկտեմբերի 17-ին՝ ժամը 16:00-ին, Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի Իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051, ք. Երևան, Հովսեփ Էմինի 123):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2020 թվականի նոյեմբերի 3-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,

իրավաբանական գիտությունների թեկնածու  **Ջ.Տ. Հայրապետյան**

Тема диссертации утверждена в Российско-Армянском университете

Научный руководитель:

**доктор юридических наук,
профессор Л.З. Тадевосян**

Официальные оппоненты:

**доктор юридических наук,
профессор С.А. Дилбандян
кандидат юридических наук,
А.Г.Аветисян**

Ведущая организация:


Образовательный комплекс Полиции РА

Защита состоится 17-ого декабря 2020 года в 16:00 часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции ВАК РА при Российско-Армянском университете (0051, г. Ереван, ул. Овсепя Эмина, 123).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки Российско-Армянского университета.

Автореферат разослан 3-ого ноября 2020 года.

**Ученый секретарь специализированного совета,
кандидат юридических наук**



Дж.А. Айрапетян

Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

Ատենախոսության թեմայի արդիականությունը. Քրեադատավարական գործունեության իրականացման ընթացքում՝ հանցագործությունների բացահայտման կամ կատարման հանգամանքների ամբողջական պարզաբանման համար քրեական հետապնդման մարմինները միջամտություն են իրականացնում օրենքով պահպանվող գաղտնիքների նկատմամբ, ուստի առավել քան կարևոր է ունենալ իրավական որոշակիության սկզբունքին համապատասխան օրենսդրական կարգավորումներ, որոնք թույլ չեն տա իրականացնել օրենքով պահպանվող գաղտնիքների ստացման դատավարական կարգը սահմանող նորմերի երկակի կամ հայեցողական մեկնաբանություն: Առհասարակ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ առկա չէ օրենքով պահպանվող գաղտնիքի համընդհանուր հասկացություն, ինչը թույլ կտար հստակ պատկերացում կազմել, թե ինչ չափանիշներից ելնելով պետք է տեղեկությունը ստանա գաղտնիության ռեժիմ և պահպանվի օրենքով: ՀՀ օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ օրենքով պահպանվող գաղտնիքներից միայն պետական գաղտնիք կազմող տեղեկություններն ունեն պաշտպանվածության բարձր աստիճան, ինչը չի կարելի պնդել «մասնավոր» գաղտնիքների դեպքում: ՀՀ օրենսդրությամբ պահպանվում են տարբեր տեսակի «մասնավոր» գաղտնիքներ, սակայն դրանք չունեն բավարար պաշտպանության մակարդակ և առանձին դեպքերում օրենսդրական ոչ հստակ ձևակերպումների պատճառով դրանց նկատմամբ քրեադատավարական միջամտությունն անխուսափելիորեն հանգեցնում է անձանց իրավունքների անհամաչափ սահմանափակման:

Պատահական չէ, որ վերջին շրջանում ՀՀ Սահմանադրական դատարանի (այսուհետ՝ նաև Սահմանադրական դատարան) քննության առարկա են դառնում օրենքով պահպանվող առանձին գաղտնիքների վերաբերյալ քրեադատավարական կարգավորումները: Ազգային ժողովի կողմից 2020 թվականի հունվարի 22-ին երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքները, կարելի է ասել, քրեական հետապնդման մարմինների օգտին էին (pro auctoritate) և սուբյեկտային սահմանափակման վերացման առումով ուղղված էին բանկային գաղտնիքի պաշտպանության հիմքերի թուլացմանը, քանի որ նշված օրենքների ընդունման հիմնավորումներում ընդգծվել էր, որ օրենսդրական փոփոխության արդյունքում չեն ստեղծվի անհամաչափ կամ անհաղթահարելի սահմանափակումներ՝ հանցագործությունների կանխման, խափանման և դրանց բացահայտմանն ուղղված գործունեության ընթացքում: Սակայն, Ազգային ժողովի կողմից ընդունված հիշյալ օրենքները ՀՀ նախագահի կողմից չստորագրվեցին և 2020 թվականի փետրվարի 6-ին Սահմանադրական դատարան ներկայացվեց դիմում, որի կապակցությամբ Սահմանադրական դատարանն իր որոշմամբ նշված օրենքները

ճանաչեց Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 75, 78 և 79-րդ հոդվածներին հակասող:

Օրենքով պահպանվող գաղտնիքների սահմանման, ինչպես նաև ստացման եղանակի իրավական կարգավորման թերությունները՝ մի կողմից, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման արագությունը՝ մյուս կողմից, ուղղակիորեն ազդում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) սահմանված քրեական դատավարության օրենսդրության խնդիրների պատշաճ իրականացման վրա՝ առաջ բերելով հանրային և մասնավոր շահերի արդյունավետ հավասարակշռման նոր մարտահրավերներ:

Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ-ում օրենքով պահպանվող գաղտնիքների վերաբերյալ որոշ քրեադատավարական հիմնախնդիրներ իրենց լուծումն են ստացել ՀՀ վճռաբեկ դատարանի (այսուհետ՝ նաև Վճռաբեկ դատարան) և Սահմանադրական դատարանի որոշումներով, այնուամենայնիվ, դեռ առկա են բազմաթիվ քրեադատավարական հիմնախնդիրներ: Այդպիսի քրեադատավարական հիմնախնդիրներից են՝

- նախնական քննության գաղտնիք կազմող տեղեկությունների ցանկի սահմանումը,
- վկայության իմունիտետով օժտված անձանց շրջանակի ընդլայնումը,
- օրենքով պահպանվող որոշ գաղտնիքների ստացումը նախնական դատական վերահսկողության առարկա դարձնելու անհրաժեշտությունը,
- բանկային, փաստաբանական, ապահովագրական, առևտրային գաղտնիքների իրական պաշտպանվածության ապահովումը:

Վերոշարադրյալի համատեքստում օրենքով պահպանվող գաղտնիքի պաշտպանության էության և միջոցների վերաբերյալ տեսական մոտեցումների, միջազգային փորձի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ նաև՝ Եվրոպական դատարան) կողմից մշակված չափորոշիչների վերլուծությունը, դրանց արդյունքում գործող իրավակարգավորումների, պրակտիկայի գնահատումը և կատարելագործմանն ուղղված առաջարկություններ ներկայացնելը քրեադատավարական օրենսդրության համար ունեն օրակարգային նշանակություն, որով էլ պայմանավորված է սույն ատենախոսության արդիականությունը:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը. Հայրենական մասնագիտական գրականության մեջ օրենքով պահպանվող գաղտնիքի քրեադատավարական պաշտպանության թեման մինչ օրս համակարգային վերլուծության չի ենթարկվել, սակայն օրենքով պահպանվող գաղտնիքի պաշտպանության վերաբերյալ որոշ հիմնախնդիրներ տեղ են գտել Ա.Ս.Ղամբարյանի, Ս.Ա.Դիլբանդյանի, Ա.Կ.Դանիելյանի, Գ.Մ.Հակոբյանի, Գ.Ն.Ենգիբարյանի և Ռ.Լ.Ափոյանի աշխատություններում: Օրենքով պահպանվող առանձին գաղտնիքների պաշտպանությանը տարբեր տեսանկյուններից անդրադարձ է կատարվել առավելապես արտասահմանյան հեղինակների կողմից, մասնավորապես, Ա.Ա.Ֆատյանովի, Ա.Ե.Մասլովի, Դ.Մարշալի, Դ.Նեոյի, Ի.Վ.Բոնդարի, Թ.Թոմասի, Ի.Վ.Սմոլկովայի, Մ.Ս.Կոլոսովիչի, Մ.Յու.Տերեխովի, Յու.Ս.Պիլիպենկոյի, Ռ.Պատենդենի, Զ.Լովմանի, Ս.Բոյսենի, Ս.Ս.Պարշինի,

Վ.Ա.Մազուրովի, Վ.Ե.Եվսենկոյի, Վ.Մ.Պերմյակովի և այլոց աշխատություններում: Առանձնակի ուշադրության է արժանի Ի.Վ.Սմոլկովայի՝ «Քրեական դատավարությունում օրենքով պահպանվող գաղտնիքի հիմնախնդիրները» վերտառությամբ դոկտորական ատենախոսությունը (1998թ.), ինչպես նաև վերջինիս «ՌԴ քրեական դատավարությունում դաշնային օրենքով պահպանվող գաղտնիքների արդի հիմնախնդիրները» վերտառությամբ մենագրությունը (2014թ.), որոնք սույն թեմային առնչվող եզակի համալիր հետազոտություններն են:

Բարձր գնահատելով հիշյալ գիտնականների արժեքավոր հետազոտությունները, որոնք մեծ ներդրում են ունեցել նաև քրեական դատավարության իրավունքի գիտության զարգացման հարցում՝ հարկ է փաստել, որ վերը նշված ոլորտում բազմաթիվ հիմնախնդիրներ դեռևս լրացուցիչ լուսաբանման ու հետազոտման կարիք ունեն: Պետք է ընդգծել, որ հայրենական իրավագիտության մեջ ատենախոսության ձևաչափով տարբեր տեսանկյուններից անդրադարձ է կատարվել գաղտնիքների առանձին տեսակներին: Մասնավորապես, Գ.Մ.Հակոբյանն անդրադարձել է բժշկական գաղտնիքի քրեաիրավական պաշտպանությանը, Գ.Ն.Ենգիբարյանը՝ ՀՀ-ում պետական գաղտնիքի իրավական կարգավորման հիմնախնդիրներին, Ռ.Լ.Ավոյանը՝ մարդու և քաղաքացու հեռախոսային խոսակցությունների և այլ հաղորդակցության գաղտնիության իրավունքի պաշտպանության սահմանադրաիրավական նկատառումներին, Ա.Կ.Դանիելյանը՝ նախնական դատական վերահսկողության համատեքստում օրենքով պահպանվող գաղտնիքների սահմանափակմանն ուղղված գործողությունների նկատմամբ նախնական դատական վերահսկողության առանձնահատկություններին: Ելնելով նշվածից՝ հետազոտության շրջանակներում մեր կողմից մանրամասն անդրադարձ է կատարվել հատկապես փաստաբանական, բանկային, առևտրային, ապահովագրական, նախնական քննության գաղտնիքներին և դրանց քրեադատավարական պաշտպանությանը՝ իրականացնելով օրենքով պահպանվող գաղտնիքի պաշտպանության հիմնախնդրի համապարփակ և համալիր հետազոտություն, ինչը հնարավորություն է տալիս բացահայտելու այս ոլորտում առկա օրենսդրական բացերն ու հակասությունները:

Հետազոտության օբյեկտը. Հետազոտության օբյեկտն օրենքով պահպանվող գաղտնիքների պաշտպանության կապակցությամբ առաջացող քրեադատավարական հարաբերություններն են:

Հետազոտության առարկան. Հետազոտության առարկան օրենքով պահպանվող գաղտնիքների ստացման և օգտագործման հարաբերությունները կարգավորող ներպետական և միջազգային իրավական նորմերն են, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի (այսուհետ՝ նաև Օրենսգրքի նախագիծ) կարգավորումները, իրավակիրառ պրակտիկան, միջազգային փորձն ու տեսական աղբյուրները:

Հետազոտության նպատակը և խնդիրները. Հետազոտության նպատակն օրենքով պահպանվող գաղտնիքների ստացման և օգտագործման կապակցությամբ առաջացող քրեադատավարական հարաբերությունների

համակարգային ուսումնասիրությունն ու վերլուծությունն է, տեսական և գործնական հիմնախնդիրների վերհանումը, դրա վերահիմաստավորումը, կատարված համալիր հետազոտության արդյունքների հիման վրա օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմանն ուղղված առաջարկությունների մշակումը: Վերոնշյալ նպատակին հասնելու համար խնդիր է դրվել.

ա) սահմանել օրենքով պահպանվող գաղտնիքի հասկացությունը,

բ) ներկայացնել օրենքով պահպանվող գաղտնիքի պաշտպանության էությունը և հատկանիշները,

գ) տալ օրենքով պահպանվող գաղտնիքի պաշտպանության սահմանումը,

դ) կատարված ուսումնասիրության արդյունքում առաջարկել օրենքով պահպանվող գաղտնիքի նոր տեսական դասակարգում,

ե) սահմանել օրենքով պահպանվող գաղտնիքի պաշտպանության քրեադատավարական միջոցների հասկացությունը,

զ) առաջարկել օրենքով պահպանվող գաղտնիքի պաշտպանության քրեադատավարական միջոցների տեսական դասակարգում,

է) վեր հանել քրեական դատավարությունում օրենքով պահպանվող գաղտնիքների ստացման և օգտագործման տեսական և գործնական խնդիրները՝ ուսումնասիրելով դրանց կապակցությամբ ձևավորված դատական պրակտիկան և միջազգային փորձը,

ը) իրականացված հետազոտության արդյունքների հիման վրա մշակել և ներկայացնել օրենքով պահպանվող գաղտնիքի պաշտպանվածության բարձրացմանն ուղղված օրենսդրական և գործնական առաջարկներ:

Հետազոտության տեսական հիմքը. Հետազոտության տեսական հիմքն են օրենքով պահպանվող գաղտնիքի քրեադատավարական պաշտպանությանը նվիրված հայրենական և արտասահմանյան հեղինակների աշխատությունները, հետազոտության օբյեկտին և առարկային առնչվող մասնագիտական գրականությունը՝ ատենախոսությունները, սեղմագրերը, մենագրությունները, գիտական հոդվածները և էլեկտրոնային հրապարակումները:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքը. Հետազոտության իրավական և փորձառական հիմքը կազմել են օրենքով պահպանվող գաղտնիքների պաշտպանությանն առնչվող ՀՀ և այլ պետությունների նորմատիվ իրավական ակտերը, դատական պրակտիկայի նյութերը, այդ թվում՝ Եվրոպական դատարանի, Եվրոպական միության արդարադատության դատարանի (այսուհետ՝ նաև ԵՄ դատարան), Վճռաբեկ դատարանի, Սահմանադրական դատարանի, ՀՀ վերաքննիչ քրեական և առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների, այլ պետությունների դատարանների դատական ակտերը:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը. Պայմանավորված հետազոտության նպատակով և խնդիրներով՝ այն իրականացվել է ինչպես համընդհանուր՝ դիալեկտիկական և պատմական, համատեսական՝ ինդուկցիայի, դեդուկցիայի, անալիզի և սինթեզի, այնպես էլ հատուկ՝ համակարգակառուցվածքային և իրավահամեմատական մեթոդների

օգտագործմամբ:

Հետազոտության գիտական նորույթը. Ատենախոսությունը հայրենական իրավագիտության շրջանակներում առաջին համապարփակ և ամբողջական գիտահետազոտական ուսումնասիրությունն է, որտեղ փորձ է արվել հնարավորինս համալիր և բազմակողմանի քննարկել ու վերլուծել օրենքով պահպանվող գաղտնիքների պաշտպանության տեսական և գործնական հիմնախնդիրները:

Հետազոտվել են հայրենական դատավարական գրականության մեջ ոչ լիարժեք ուսումնասիրված կամ գրեթե չուսումնասիրված այնպիսի հիմնահարցեր, ինչպիսիք են «գաղտնիքի պահպանում» և «գաղտնիքի պաշտպանություն» եզրույթների օրենսդրական և տեսական տարբերակումը, օրենքով պահպանվող գաղտնիքի պաշտպանության միջոցների հասկացությունն ու դասակարգումը, ինչպես նաև նախնական քննության, բանկային, փաստաբանական, ապահովագրական, առևտրային գաղտնիքների պաշտպանության քրեադատավարական միջոցների արդյունավետության և կատարելագործման հիմնախնդիրները: Արդյունքում՝ կատարվել են տեսական եզրահանգումներ և ներկայացվել օրենսդրական ու գործնական առաջարկներ:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները.

1. Գաղտնիքի հասկացության վերաբերյալ իրավաբան-գիտնականների մոտ չկա միասնական մոտեցում, ՀՀ օրենսդրությամբ գաղտնիքի ընդհանրական հասկացությունը նույնպես բնորոշված չէ:

Մեր կողմից առաջարկվում է օրենքով պահպանվող գաղտնիքի հետևյալ բնորոշումը. **օրենքով պահպանվող գաղտնիքը որոշակի սուբյեկտների կարևոր շահերն արտացոլող արժեքավոր տեղեկության (տվյալի) իրավական ռեժիմ է, որի նկատմամբ հասանելիությունը սահմանափակված է օրենսդրությամբ նախատեսված անձանց շրջանակով ու պայմաններով, և որը չարտոնված (չսանկցավորված) հավաքելը, պահելը, օգտագործելը կամ տարածելը կարող են վնաս հասցնել տեղեկության (տվյալի) կրողի շահերին:**

Նշված բնորոշման առավելությունն այն է, որ ընդգրկում է օրենքով պահպանվող գաղտնիքի առավել բնութագրական հատկանիշների ավելի լայն զանգված, գաղտնիքի պահպանությունը կախման մեջ չի դրվում իրավաբանական պատասխանատվության պարտադիրության հանգամանքից: Բնորոշման մեջ մեր կողմից ներառվել են երկու նոր հատկանիշ՝ (1) առաջ է քաշվել գաղտնիք կազմող տեղեկության (տվյալի) արժեքավորության հատկանիշը, (2) տեղեկության (տվյալի) օգտագործման կամ իրապարակման անթույլատրելիությունը կապել է արտոնված (սանկցավորված) չլինելու հետ:

2. ՀՀ օրենսդրության մեջ «գաղտնիքի պահպանում» և «գաղտնիքի պաշտպանություն» եզրույթների օգտագործման դեպքերի ուսումնասիրությունը վկայում է, որ «գաղտնիքի պահպանում» և «գաղտնիքի պաշտպանություն» իրավական կատեգորիաները չունեն հստակ տրամաբանական տարանջատում, իսկ իրավաբանական գրականության մեջ բացակայում է օրենքով պահպանվող գաղտնիքի պաշտպանության տեսական սահմանումը:

Մեր կողմից կատարված օրենսդրական և տեսական ուսումնասիրությունների արդյունքում տրվել է օրենքով պահպանվող գաղտնիքի պաշտպանության հետևյալ տեսական սահմանումը. **օրենքով պահպանվող գաղտնիքի պաշտպանությունը որպես իրավական պաշտպանության տեսակ իրավական միջոցների ու ձևերի ամբողջություն է, որը կոչված է զերծ պահել օրենքի պահպանության ներքո գտնվող գաղտնիքը և (կամ) գաղտնիքի իրավունքը ոտնձգությունից և (կամ) ոչ իրավաչափ միջամտությունից:**

3. Օրենքով պահպանվող գաղտնիքի ինստիտուտի հետազոտման համատեքստում կարևորելով գաղտնիքի տեսական դասակարգումը՝ այն իրականացվել է ըստ հետևյալ հիմքերի (չափանիշների).

ա) Ըստ տեղեկատվությանը տիրապետողի՝ պահպանվող գաղտնիքն առաջարկվում է դասակարգել 4 խմբի՝ 1) պետական գաղտնիք, 2) մասնագիտական գաղտնիք, 3) առևտրային գաղտնիք, 4) անձնական և ընտանեկան գաղտնիք:

բ) Ըստ հետապնդվող շահի էության՝ պահպանվող գաղտնիքն առաջարկվում է դասակարգել 3 խմբի՝ 1) հանրային շահ, 2) առևտրային շահ, 3) անհատական շահ:

գ) Ըստ ձևի՝ պահպանվող գաղտնիքն առաջարկվում է դասակարգել 2 խմբի՝ 1) փաստաթղթավորված կամ գրավոր, 2) չփաստաթղթավորված կամ բանավոր:

դ) Ըստ պահպանման ժամանակի՝ պահպանվող գաղտնիքն առաջարկվում է դասակարգել 3 խմբի՝ 1) ժամանակավոր (օրինակ՝ նախաքննության գաղտնիքը), 2) մշտական կամ ժամանակով չսահմանափակված (օրինակ՝ պետական կամ փաստաբանական գաղտնիքը), 3) հարաբերական-մշտական (օրինակ՝ որոշակի պարտադիր ընթացակարգերով բացահայտվող գաղտնիքը):

ե) Ըստ պաշտպանվածության ռեժիմի (աստիճանի)՝ պահպանվող գաղտնիքն առաջարկվում է դասակարգել 4 խմբի՝ 1) պարզ (գաղտնիքներ, որոնց բացահայտման համար գործում է պարզեցված ընթացակարգ), 2) բարդ (գաղտնիքներ, որոնց բացահայտման համար անհրաժեշտ է հատուկ դատավարական կարգավիճակի պայմաններում դատարանի թույլտվություն), 3) հարաբերական-բարդ (գաղտնիքներ, որոնց բացահայտման համար չի պահանջվում հատուկ դատավարական կարգավիճակի առկայություն), 4) բացարձակ (գաղտնիքներ, որոնք չեն կարող բացահայտվել կամ հրապարակվել այլ կերպ, քան անձի թույլտվությամբ կամ համաձայնությամբ):

զ) Ըստ հնարավոր հետևանքների՝ պահպանվող գաղտնիքն առաջարկվում է դասակարգել 3 խմբի՝ 1) նախատեսվում է իրավաբանական պատասխանատվություն, 2) ազդում է ապացույցների թույլատրելիության վրա, 3) անձը զրկվում է դատավարությանը մասնակցելուց:

Այս դասակարգումն էապես տարբերվում է գոյություն ունեցողներից. մասնավորապես՝ մեր կողմից տարանջատվել են տեղեկատվության տիրապետողի և հետապնդվող շահի էության հիմքերն ու դրանց խմբերը, քանի որ դրանք նույնացման ենթակա չեն, ըստ պաշտպանվածության ռեժիմի (աստիճանի)՝

կատարվել է նոր դասակարգում, առաջին անգամ դասակարգումներ են կատարվել ըստ գաղտնիքի ճևի և ըստ հնարավոր հետևանքների:

4. Իրավաբանական գրականության մեջ հատուկ ուշադրության չի արժանացվել օրենքով պահպանվող գաղտնիքի պաշտպանության քրեադատավարական միջոցների տեսական սահմանումը, նման սահմանում իրավաբան-գիտնականների կողմից մինչ օրս չի մշակվել:

Հաշվի առնելով օրենքով պահպանվող գաղտնիքի պաշտպանության նպատակը և խնդիրները՝ մեր կողմից տրվել է օրենքով պահպանվող գաղտնիքի պաշտպանության քրեադատավարական միջոցների հասկացության հետևյալ տեսական սահմանումը. **օրենքով պահպանվող գաղտնիքի պաշտպանության քրեադատավարական միջոցները քրեադատավարական օրենքում ամրագրված տարբեր երաշխիքների և պայմանների ամբողջություն են, որոնք հանրային և մասնավոր շահերի արդարացի հավասարակշռմամբ երաշխավորում են օրենքով պահպանվող գաղտնիքի ստացման, օգտագործման և հրապարակման ընթացքում օրինականության ապահովումը, այն է՝ մի կողմից՝ քրեական գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման հնարավորությունը, մյուս կողմից՝ գաղտնիքի սուբյեկտների օրինական շահերի ու իրավունքների պաշտպանությունը:**

5. Մեր պատկերացմամբ՝ իրավաբան-գիտնականների կողմից իրականացված՝ օրենքով պահպանվող գաղտնիքի պաշտպանության քրեադատավարական միջոցների առկա դասակարգումներն ամբողջական չեն: Օրենքով պահպանվող գաղտնիքի պաշտպանության քրեադատավարական միջոցների հասկացության բնորոշմանը և գործող իրավակարգավորումներին համահունչ՝ առաջարկում ենք օրենքով պահպանվող գաղտնիքի պաշտպանության (ապահովման) քրեադատավարական միջոցների նոր դասակարգում, որի հիմքում դրվել են այն խնդիրները, որոնք լուծմանը միտված են հետևյալ պաշտպանության միջոցները.

1) միջոցներ, որոնք միտված են գործի արդարացի քննությունն ապահովելուն ուղղված տեղեկությունների արտահոսքը կանխելուն,

2) միջոցներ, որոնք ուղղված են պետական և մասնավոր գաղտնիքներ կազմող տեղեկությունների հանրայնացումը կանխելուն,

3) միջոցներ, որոնք ուղղված են մասնագիտական կամ ծառայողական գաղտնիքների սուբյեկտներից գաղտնի տեղեկություններ պահանջելու արգելքին,

4) միջոցներ, որոնք ուղղված են մինչդատական վարույթի ընթացքում անձանց իրավունքների կամայական կամ չհիմնավորված սահմանափակումները, ինչպես նաև՝ պետական գաղտնիք կազմող տեղեկությունների անտեղի կամ անօրեն արտահոսքը կանխելուն:

6. Օրենսգրքի 201-րդ հոդվածում ամրագրված դրույթի համաձայն՝ նախնական քննության տվյալները ենթակա են հրապարակման միայն գործի վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ, սակայն in concreto նշված չէ, թե նախնական քննության որ տվյալներն են հանդիսանում հրապարակման ոչ ենթակա: Մեր կարծիքով, չափազանց լայն հայեցողություն տրամադրելը վարույթն իրականացնող մարմնին՝ որոշելու նախաքննության գաղտնիքի ծավալը, կարող է

լուրջ սպառնալիք հանդիսանալ իրավական որոշակիության սկզբունքի ապահովման համար: Միաժամանակ գտնում ենք, որ հնարավոր չէ սպառնալիք կերպով սահմանել նախնական քննության գաղտնիք կազմող տեղեկությունների ամբողջական կամ օրինակելի ցանկ: Այս առումով առաջընթաց պետք է համարել Օրենսգրքի նախագծով (186-րդ հոդվածի 2-րդ մաս) առաջարկվող մոտեցումը, որով, ըստ էության, ամրագրվել են նախաքննության տվյալների հրապարակման արգելքի հիմք-հետևանքները:

Մեր պատկերացմամբ՝ անհրաժեշտ է սահմանել նախնական քննության գաղտնիք չհանդիսացող տեղեկությունների ցանկը, որը կարող է հակակշռել վարույթն իրականացնող մարմնի լայն հայեցողությանը: Մեր կողմից առանձնացվել են 15 խումբ տեղեկություններ, որոնք չպետք է դասվեն նախնական քննության գաղտնիքների շարքին:

7. Գործնական լուրջ խնդիրներ է առաջացնում մահացած ֆիզիկական անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները քրեական հետապնդում իրականացնող մարմիններին տրամադրելու կառուցակարգերի բացակայությունը: Մեր կարծիքով, քննարկվող հարցը ենթակա է լուծման մահացած անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման օգտին: Գործող իրավակարգավորումների և Սահմանադրական դատարանի՝ 21.03.2017թ. թիվ ՍԴՈ-1358 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման լույսի ներքո առաջարկում ենք հարցի լուծման հետևյալ տարբերակը.

Վարույթն իրականացնող մարմինը համապատասխան դատավարական որոշմամբ պետք է փաստի մահացած անձի կասկածյալի կամ մեղադրյալի իրավական վիճակը՝ հիմնավորելով կասկածանքի կամ մեղադրանքի էությունը, որից հետո հնարավորություն պետք է ունենա մահացած անձի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու մասին պատճառաբանված միջնորդություն հարուցել դատարան: Հակառակ դեպքում մասնավոր շահը կարող է անհարկի գերակայել հանցագործության բացահայտման հանրային շահի նկատմամբ:

8. Բանկային գաղտնիքի քրեադատավարական պաշտպանության համատեքստում անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ժամանակակից թվային հասարակությունում բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների մեծ մասը պահպանվում և օգտագործվում են բանկերի կողմից ոչ թե փաստաթղթային ձևով, այլ՝ թվային, էլեկտրոնային տարբերակով: Նման անձնական թվային համակարգ է նաև հեռահար բանկինգի (online banking) համակարգը, որը թույլ է տալիս օգտվել բանկի կողմից մատուցվող հիմնական ծառայություններից և հեռահար եղանակով կառավարել հաշիվները:

Հեռահար բանկինգի հավելվածի նկատմամբ միջամտությունը չի կարող մեկնաբանվել լայն իմաստով (sensu lato), քանի որ այն ուղղակիորեն բանկային գաղտնիք կազմող տեղեկություն է պարունակում, որի ստացման համար անհրաժեշտ է ապահովել ոչ միայն դատարանի որոշմամբ, այլ նաև՝ սուբյեկտային սահմանափակման օրենսդրական պահանջով:

9. Չափազանց արդիական է էլեկտրոնային դրամապանակների, ինչպես նաև դրանցով իրականացվող փոխանցումների գաղտնիության ռեժիմի որոշման հարցը, մասնավորապես այն, թե հանդիսանում են արդյոք էլեկտրոնային դրամապանակներով իրականացվող գործարքները բանկային գաղտնիք: Գործող իրավակարգավորումները թույլ են տալիս եզրահանգելու, որ վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից իրականացվող ծառայություններն իրենց բնույթով ինչ-որ չափով հավասարեցված են **բանկային ծառայություններին**, ավելին՝ էլեկտրոնային դրամապանակն ունի առանձին հաշվեհամար, որի միջոցով հնարավոր է ստանալ և փոխանցել դրամական միջոցներ բանկային հաշվեհամարից:

Հաշվի առնելով մասնավոր կյանքի գաղտնիության իրավունքի ներկայիս զարգացման միտումները՝ գտնում ենք, որ էլեկտրոնային դրամապանակների նկատմամբ նույնպես պետք է տարածվի բանկային գաղտնիքի պահպանման իրավական ռեժիմը:

10. Փաստաբանական գաղտնիքի պահպանման տեսանկյունից մտահոգիչ դիսկեր են պարունակում «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով (այսուհետ նաև՝ ՕՀԳ մասին օրենք) նախատեսված կարգավորումները: Մասնավորապես, մեր համոզմամբ՝ փաստաբանական գաղտնիքի պահպանման համատեքստում պետք է արգելվի նաև ներքոհիշյալ օպերատիվ-հետախուզական միջոցառումների (այսուհետ՝ նաև ՕՀՄ) անցկացումը, երբ այդ ժամանակ անձը (այսուհետ՝ նաև Վստահորդ) հաղորդակցվում է իր փաստաբանի հետ.

- «իրերի և փաստաթղթերի հետազոտում» ՕՀՄ-ի իրականացումը, քանի որ փաստաբան-վստահորդ փոխհարաբերությունները ենթադրում են նաև որոշակի փաստաթղթաշրջանառություն (գրագրություն), որը նույնպես բովանդակում է (կարող է բովանդակել) փաստաբանական գաղտնիք կազմող տեղեկություններ,

- «արտաքին դիտում» ՕՀՄ-ի իրականացումը, քանի որ փաստաբան-վստահորդ հանդիպումները կարող են տեղի ունենալ նաև բաց տարածությունում կամ հասարակական վայրերում:

11. Փաստաբանական գաղտնիքի պահպանման տեսանկյունից հաջորդ մտահոգիչ դիսկը հետևյալն է. ՕՀԳ մասին օրենքի 31-րդ հոդվածը հստակ սահմանում է, որ «արգելվում է անցկացնել (...) նախատեսված օպերատիվ միջոցառումները, երբ անձը, որի նկատմամբ իրականացվելու է այդ միջոցառումը, հաղորդակցվում է իր փաստաբանի հետ»: Նորմի ձևակերպումից հետևում է, որ փաստաբանական գաղտնիքը պաշտպանվում է, երբ համապատասխան ՕՀՄ-ն իրականացվում է վստահորդի նկատմամբ: ՕՀԳ մասին օրենքը չի պաշտպանում փաստաբանական գաղտնիքը հակառակ իրավիճակում, այն է՝ երբ ՕՀՄ-ն իրականացվում է փաստաբանի նկատմամբ: Մինչդեռ՝ հիմք ընդունելով պահպանվող գաղտնիքի արժեքը՝ կարևոր չէ՝ այդ տեղեկությունները բացահայտվում են վստահորդի՞, թե՞ փաստաբանի նկատմամբ իրականացվող ՕՀՄ-ի արդյունքում: Երկու դեպքում էլ փաստաբանական գաղտնիք հանդիսացող

տեղեկություններն ենթակա են հավասարաչափ պաշտպանության, դրանք չպետք է բացահայտվեն, հրապարակվեն կամ օգտագործվեն որպես ապացույց:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը.

Ատենախոսության մեջ կատարված հետազոտությունների նշանակությունն առաջին հերթին կայանում է նրանում, որ հայրենական դատավարական իրավունքում առաջին անգամ մշակվել է օրենքով պահպանվող գաղտնիքի քրեադատավարական գործնական խնդիրների վերհանմանն ու դրանց լուծման ուղիների քննարկմանը նվիրված համալիր աշխատանք: Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել հետագա գիտական ուսումնասիրությունների և այն դասընթացների շրջանակներում, որոնց առարկան առնչվում է անձանց մասնավոր կյանքի գաղտնիության իրավունքին: Հիմնախնդրի առնչությամբ կատարված ուսումնասիրությունները, ներկայացված առաջարկները և դրանց հիմնավորումները կարող են օգտագործվել նաև իրավաստեղծ գործունեության մեջ, ինչպես նաև նպաստել դատական պրակտիկայի կատարելագործմանը:

Հետազոտության արդյունքների փորձարկումը.

Ատենախոսությունը պատրաստվել է ՀՌՀ քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնում: Հետազոտության արդյունքներն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված թվով 11 գիտական հոդվածներում: Ատենախոսության մի շարք դրույթներ ատենախոսի կողմից ներկայացվել են գեկույցների և ամբիոնում ներկայացված գիտական հաղորդումների շրջանակներում:

Ատենախոսության կառուցվածքը.

Ատենախոսությունը պատրաստված է ՀՀ Բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից ներկայացվող պահանջներին համապատասխան: Այն բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, դրանցում ընդգրկված 9 պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված իրավական ակտերի, գրականության և պրակտիկայի նյութերի ցանկից:

Ատենախոսության համառոտ բովանդակությունը

Ներածությունում հիմնավորվում է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվում են մշակվածության աստիճանը, հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակը և խնդիրները, հետազոտության տեսական, իրավական, փորձառական հիմքերը, մեթոդաբանությունը, գիտական նորոյթը, ձևակերպվում են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, ներկայացվում են հետազոտության տեսական և գործնական նշանակությունն ու հետազոտության արդյունքների փորձարկումը:

Առաջին գլուխը՝ «Օրենքով պահպանվող գաղտնիքի և դրա պաշտպանության տեսական հիմունքները քրեական դատավարությունում» վերտառությամբ, բաղկացած է երեք պարագրաֆներից:

Առաջին գլխի առաջին պարագրաֆում՝ «Գաղտնիքը որպես սոցիալ-իրավական երևույթ» վերտառությամբ, հեղինակը, հիմնվելով սոցիոլոգիայի և իրավագիտության տեսական աղբյուրների վրա, բնորոշել է գաղտնիքը որպես սոցիալ-իրավական երևույթ, ինչպես նաև անդրադարձ է կատարել «մասնավոր կյանք» և «անձնական տվյալ» հասկացությունների պարզաբանմանը:

Առաջին գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Օրենքով պահպանվող գաղտնիքի հասկացությունը» վերտառությամբ, հեղինակը ներկայացրել է գաղտնիքի ծագման պատմական հարցերը, այնուհետև մանրամասն վերլուծության ենթարկելով իրավաբանական գրականության մեջ առկա՝ օրենքով պահպանվող գաղտնիքի հասկացության սահմանումները, ինչպես նաև գաղտնիքի օրենսդրական ձևակերպումները՝ տվել է օրենքով պահպանվող գաղտնիքի հասկացության տեսական նոր սահմանում:

Առաջին գլխի երրորդ պարագրաֆում՝ «Օրենքով պահպանվող գաղտնիքի պաշտպանության հասկացությունը» վերտառությամբ, հեղինակը մանրամասն վերլուծության է ենթարկում ՀՀ օրենսդրության մեջ «գաղտնիքի պահպանում» և «գաղտնիքի պաշտպանություն» եզրույթների օգտագործման դեպքերը՝ ներկայացնելով դրանց տարբերությունը, որից հետո հեղինակը տվել է օրենքով պահպանվող գաղտնիքի պաշտպանության հասկացության տեսական նոր սահմանում:

Երկրորդ գլուխը՝ «Օրենքով պահպանվող գաղտնիքի դասակարգումը և քրեադատավարական միջամտության հարցերը» վերտառությամբ, բաղկացած է երկու պարագրաֆներից:

Երկրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Օրենքով պահպանվող գաղտնիքի դասակարգումը» վերտառությամբ, հեղինակը վերլուծության է ենթարկել իրավաբանական գրականության մեջ առկա՝ օրենքով պահպանվող գաղտնիքների դասակարգումները և ներկայացնում դասակարգման նոր չափանիշներ:

Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Օրենքով պահպանվող գաղտնիքի պաշտպանության քրեադատավարական միջոցները» վերտառությամբ, հեղինակի կողմից նախևառաջ տրվել է օրենքով պահպանվող գաղտնիքի պաշտպանության քրեադատավարական միջոցների հասկացության սահմանումը, ներկայացվում են

պաշտպանության միջոցների դասակարգումը, այնուհետև առանձին-առանձին անդրադարձ է կատարվում օրենքով պահպանվող գաղտնիքի պաշտպանության քրեադատավարական միջոցներին՝ ներկայացնելով դրանց կատարելագործման ուղիները:

Երրորդ գլուխը՝ «Օրենքով պահպանվող առանձին գաղտնիքների պաշտպանության քրեադատավարական հիմնախնդիրները» վերտառությամբ, բաղկացած է չորս պարագրաֆներից:

Երրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Բանկային գաղտնիքի քրեադատավարական պաշտպանությունը» վերտառությամբ, հեղինակն ուսումնասիրել է բանկային գաղտնիքի պաշտպանության կառուցակարգերի վերաբերյալ ներպետական և միջազգային իրավական ակտերը, քննարկման առարկա է դարձրել մահացած անձանց բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման կառուցակարգը, ինչպես նաև հեռահար բանկինգի հավելվածում և էլեկտրոնային դրամապանակներում պահպանվող տեղեկության գաղտնիության ռեժիմի հարցերը:

Երրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Փաստաբանական գաղտնիքի քրեադատավարական պաշտպանությունը» վերտառությամբ, հեղինակը ներկայացնելով ներպետական օրենսդրության համապատասխանությունը միջազգային չափանիշներին, այնուամենայնիվ գտել է, որ «ՕՀԳ» մասին օրենքը պարունակում է փաստաբանական գաղտնիքի պահպանման տեսանկյունից մտահոգիչ ռիսկեր և առաջարկել է համապատասխան փոփոխություններ՝ այդպիսիք վերացնելու ուղղությամբ:

Երրորդ գլխի երրորդ պարագրաֆում՝ «Քրեադատավարական միջամտությունից ապահովագրական գաղտնիքի պաշտպանության հիմնահարցերը» վերտառությամբ, հեղինակն անդրադարձել է ապահովագրական գաղտնիքի pro persona (անձի օգտին) և pro auctoritate (պետական մարմնի օգտին) մեկնաբանություններին, ինչպես նաև այն հարցին թե արդյո՞ք ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման դեպքում սուբյեկտային սահմանափակման երաշխիքն անհրաժեշտ և պիտանի պայման է:

Երրորդ գլխի չորրորդ պարագրաֆում՝ «Առևտրային գաղտնիքի պաշտպանության քրեադատավարական հիմնախնդիրները» վերտառությամբ, հեղինակը ներկայացնելով առևտրային գաղտնիքի ամրագրման օրենսդրական փորձերը՝ փաստել է, որ վաղուց հասունացել է առևտրային գաղտնիքի օրենսդրական բնորոշման անհրաժեշտությունը, ինչպես նաև՝ առևտրային գաղտնիք կազմող և այլ գաղտնիքներ (բանկային, ապահովագրական և այլն) կազմող տեղեկությունների սահմանազատման մշակումը:

Առենախոսության եզրակացություններում, ի լրումն պաշտպանության ներկայացվող դրույթների, կատարվել են հետևյալ հիմնական եզրահանգումներն ու առաջարկությունները:

1. Բնորոշելով գաղտնիքը որպես սոցիալական համակարգերի ներսում, ինչպես նաև սոցիալական համակարգերի միջև հանդես եկող հաղորդակցության միջոց և ըստ սոցիալական անհրաժեշտության՝ տեղեկության սելեկտիվ որակման

գործառույթ իրականացնող երևույթ (selektive Qualifizierung), միաժամանակ նկատի ունենալով, որ գաղտնիք կազմող տեղեկությունների պահպանումն իր ամրագրումն է ստացել ինչպես ՀՀ Սահմանադրությամբ, այնպես էլ օրենքներով, ուստի գաղտնիքն իր բովանդակային էությամբ հայտնվում է հասարակական կյանքի երկու ոլորտներում՝ սոցիալական և իրավական, որպիսի պայմաններում այն կարող է բնորոշվել որպես սոցիալ-իրավական երևույթ:

2. ՀՀ օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ «իրավական պաշտպանություն» և «իրավական պահպանություն» եզրույթները հաճախ նույնացվում են: Մինչդեռ պահպանություն և պաշտպանություն իրավական եզրույթները նույնական չեն, քանի որ պահպանությունն օրենքով նախատեսված հարաբերության իրավական ռեժիմի սահմանումն է, իսկ պաշտպանությունն այն իրավական միջոցներն են, որոնք գործի են դրվում պահպանվող իրավահարաբերության խախտման կամ վերջինիս սպառնալիքի դեպքում:

Գտնում ենք, որ ՀՀ օրենսդրությամբ իրականացվող իրավակարգավորումներում պետք է հստակ տարանջատվեն «իրավական պաշտպանություն» և «իրավական պահպանություն» եզրույթները:

3. Գաղտնիք պարունակող տեղեկության պահպանությունը նախատեսված է բավական լայն շրջանակի իրավական ակտերով, սակայն գաղտնիքի պահպանության խախտման համար իրավաբանական պատասխանատվություն նախատեսող իրավական ակտերն ու դրույթները սակավաթիվ են: Հարցն այն է, որ ոչ բոլոր տեղեկությունների պահպանման պայմանների ու կարգի խախտման համար է օրենքը նախատեսում ուղղակի պատասխանատվություն: Ըստ այդմ՝ անհրաժեշտ է օրենսդրությամբ իրավաբանական պատասխանատվություն նախատեսել օրենքով պահպանվող գաղտնիքի կարգի ու պայմանների խախտման ողջ զանգվածի համար:

4. Սահմանափակ հասանելիությամբ տեղեկությունների շրջանառման հետ կապված հարաբերությունների պահպանման օբյեկտ են հանդիսանում այն շահերը, որոնց կարող է վնաս հասցվել չթույլատրված հասանելիության (օգտագործում, հրապարակում) արդյունքում, ուստի գաղտնիքի օրենքով պահպանությունն իրենից ներկայացնում է գաղտնիության իրավունքի ապահովմանն ուղղված փոխկապակցված միջոցառումների համալիր: Այդ միջոցառումները կարելի է խմբավորել հետևյալ կերպ.

- օրենսդրությամբ գաղտնիության ռեժիմի ամրագրում, գաղտնիքների տեսակների սահմանում,

- գաղտնիքի առնչությամբ ծագած իրավահարաբերության մասնակիցների իրավաչափ (թույլատրելի) և հակաիրավական վարքագծի հատկանիշները սահմանող իրավական նորմերի ընդունում,

- գաղտնիքի ստացման, օգտագործման հետ կապված իրավահարաբերության մասնակիցների, ինչպես նաև պաշտոնատար անձանց իրավասությունների նախատեսում,

- պետական հարկադրանքի միջոցներ, որոնք կիրառելի են հակաիրավական վարքագծի պայմաններում:

5. Կարծում ենք, որ օրենքով պահպանվող գաղտնիքների իրական պաշտպանվածությունն ապահովելու տեսանկյունից առևտրային, բժշկական և աուդիտորական գաղտնիք հանդիսացող տեղեկություններ ստանալը նույնպես պետք է ուղեկցվի նախնական դատական վերահսկողությամբ, քանի որ այն դեպքում, երբ ex post factum վիճարկվում է գաղտնիքի ստացման իրավաչափության հարցը, եթե նույնիսկ այն եղել է ոչ իրավաչափ, պապ ըստ էության գաղտնիքն արդեն բացահայտված է և հետագա դատական վերահսկողությունն ի գորու չէ զերծ պահել գաղտնիքների հուսակորուստը: Մեր նման մոտեցումը բխում է այն իրողությունից, որ հաշվի առնելով մասնավոր կյանքի գաղտնիության իրավունքի զարգացման ներկայիս միտումները, աստիճանաբար նախնական դատական վերահսկողության առարկա է դառնում քննչական և դատավարական գործողությունների ավելի լայն շրջանակ, որոնց միջոցով ստացվում են «մասնավոր» գաղտնիքները, այլ կերպ՝ գաղտնիության ձևական տեսությունից և գաղտնիքի ձևական պաշտպանությունից անցում է կատարվում գաղտնիքի իրական պաշտպանության:

6. Օրենսգրքի 201-րդ հոդվածը նվիրված է նախնական քննության տվյալների հրապարակման անթույլատրելիությանը կամ քրեադատավարական գիտությանը քաջ հայտնի նախնական քննության գաղտնիքին:

Առաջարկում ենք օրենսգրքի 201-րդ հոդվածը փոփոխել այն հաշվով, որ նախ՝ հոդվածը պետք է վերնագրվի՝ «Մինչդատական քրեական վարույթի տվյալների հրապարակման անթույլատրելիությունը», երկրորդ, բովանդակության մեջ՝ «նախնական քննության տվյալներ» ձևակերպումը պետք է փոխարինվի «մինչդատական քրեական վարույթի տվյալներ» ձևակերպմամբ:

7. Օրենսգրքի 201-րդ հոդվածի 2-րդ մասի դիսպոզիցիայով օրենսդիրը պայման է դրել վարույթն իրականացնող մարմնի առաջ, որ միայն անհրաժեշտ դեպքերում կարող է գրավոր նախազգուշացնել նախնական քննության տվյալներն առանց թույլտվության չհրապարակելու պարտականության մասին: Տվյալ դեպքում հարց է ծագում, թե ինչո՞վ է պայմանավորվում անհրաժեշտությունը և որո՞նք են այդ անհրաժեշտ դեպքերը:

Կարծում ենք, որ վարույթն իրականացնող մարմինը պետք է յուրաքանչյուր դեպքում պատճառաբանի իր որոշումը: Նկատի ունենք, որ դատավարության մասնակցին նախնական քննության տվյալներն առանց թույլտվության չհրապարակելու պարտականության մասին նախազգուշացնելիս վարույթն իրականացնող մարմինն այդ կապակցությամբ պետք է կատարի հետևյալ հաջորդական քայլերը.

1) կազմել արձանագրություն դատավարության համապատասխան մասնակցին (այլ մասնակցին) նախնական քննության տվյալներն առանց թույլտվության չհրապարակելու վերաբերյալ նախազգուշացնելու մասին.

2) արձանագրության մեջ ներառել այն տեղեկությունները, որոնք դատավարության տվյալ մասնակցի (այլ մասնակցի) կողմից հրապարակման վտանգի տակ են գտնվում կամ ենթադրաբար կարող են հրապարակվել (քննչական և դատավարական գործողությունների արձանագրություններում, դատավարական

այլ փաստաթղթերում ամրագրված այն տեղեկությունները, որոնք հայտնի են դարձել տվյալ անձին կամ վերջինս է հայտնել)։

3) տեղեկությունները չհրապարակելու արգելքի հիմքը (Օրենսգրքի նախագծի 186-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերից որևէ մեկը)։

Մեր կողմից առաջարկվող ձևաչափը կարող է լուծել նաև հետևյալ խնդիրը. << քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի դիսպոզիցիայից հետևում է, որ անկախ քրեադատավարական իմաստով նախագգուշացված լինելու հանգամանքից, ինչպես նաև տվյալների հրապարակման՝ հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունից, անձը ենթակա է պատասխանատվության նախաքննության կամ հետաքննության տվյալները հրապարակելու համար։

8. Քրեական դատավարության իրավունքի տեսությունը՝ կապված վկայության իմունիտետով օժտված անձի կամահայտնությունից, տարբերակում է վկայի իմունիտետի երկու տեսակ՝ իմպերատիվ և դիսպոզիտիվ։ Իմպերատիվ իմունիտետով օժտված են այն անձինք, ովքեր պարտավոր են մասնագիտական կամ ծառայողական պարտականություններից ելնելով՝ պահպանել որոշակի գաղտնիքներ, իսկ դիսպոզիտիվ իմունիտետով օժտված են այն անձինք, ովքեր կարող են հրաժարվել ցուցմունք տալուց։

Վկայության իմունիտետը որպես օրենքով պահպանվող գաղտնիքի պաշտպանության քրեադատավարական միջոց ամրագրված է նաև այլ օրենքներում (օրինակ՝ բանկերի, ապահովագրական կազմակերպությունների աշխատակիցների, լրագրողների վկայության իմունիտետը)։ Փաստորեն, առկա է մի իրավիճակ, երբ քրեական դատավարության օրենսգրքից դուրս այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված վկայության իմունիտետը վտանգվում է և օրենքով պահպանվող գաղտնիքի պաշտպանության տեսանկյունից առաջացնում է խիստ մտահոգիչ դիսկեր։ Մասնավորապես, նախաքննության մարմինները կարող են շրջանցել օրենքով պահպանվող գաղտնիքի ստացման դատավարական կարգը և նշված անձանց ցուցմունքներով ստանալ օրենքով պահպանվող գաղտնիք հանդիսացող տեղեկություններ։

Ստեղծված իրավական վիճակում կարելի է առաջարկել երկու լուծում.

- իրավական կոլիզիայի լուծման հիմնական ժամանակավոր իրավական միջոց պետք է հանդես գա նորմատիվ իրավական ակտի դրույթն (Օրենսգրքի 20-րդ հոդվածի 3-րդ մասը) ուժը կորցրած ճանաչելը, կամ՝

- վկայության իմունիտետով օժտված բոլոր անձանց ներառել քրեական դատավարության օրենսգրքում, որպեսզի վտանգի տակ չդրվի օրենքով պահպանվող գաղտնիքի պաշտպանությունը։

9. Իրավահամեմատական մեթոդի կիրառմամբ ուսումնասիրված եվրոպական երկրների քրեադատավարական օրենսդրությունները, ի տարբերություն ԱՊՀ երկրների քրեադատավարական օրենսդրությունների, նախատեսում են, որ ցուցմունք տալու պարտականությունից ազատված են ոչ միայն մասնագիտական գաղտնիքի սուբյեկտները՝ փաստաբանները, նոտարները, բժիշկները, այլ նաև վերջիններիս օգնականները։

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ փաստաբանական և նոտարական գաղտնիքների հետ ուղղակիորեն առնչվում են նաև փաստաբանների և նոտարների օգնականները, որպիսիք ուղղակիորեն նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ, առաջարկում ենք Օրենսգրքում ամրագրել, որ որպես վկա չեն կարող կանչվել և հարցաքննվել նաև փաստաբանների և նոտարների օգնականները: Հակառակ պարագայում իմաստագրկվում է փաստաբանական և նոտարական գաղտնիքների պաշտպանությունը:

10. Յուրաքանչյուր դեպքում Օրենսգրքի պահանջներին համաձայն դոնփակ դատական քննություն անցկացնելու մասին որոշում կայացնելու դեպքում, դատարանները պետք է կայացնեն պատճառաբանված որոշում առ այն, թե ո՞ր հանգամանքների ուժով են հանգել դատական քննությունը դոնփակ անցկացնելու հետևության: Բանն այն է, որ Օրենսգրքի 16-րդ հոդվածի 5-րդ մասն ամրագրում է, որ գործը կամ դրա մի մասը դոնփակ նիստում քննելու մասին դատարանը կայացնում է որոշում, այսինքն՝ նշված չէ որոշման պատճառաբանման պահանջ, ինչը Եվրոպական դատարանի վճիռների լուսի ներքո անընդունելի է:

11. Գործնականում հանդիպում են իրավիճակներ, երբ նախաքննության մարմնի որոշմամբ բոլորովին այլ առարկաներ, արժեքներ կամ փաստաթղթեր գտնելու և վերցնելու նպատակով կատարվող խուզարկության ընթացքում հայտնաբերվում են օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող փաստաթղթեր: Կարծում ենք, որ նման իրավիճակներում օրենքով պահպանվող գաղտնիք բովանդակող փաստաթղթերը խուզարկությամբ կարող են վերցվել երկու դեպքում՝

1) եթե այդ փաստաթղթերն ակնհայտորեն վերաբերելի են գործին և կարող են նշանակություն ունենալ գործի համար,

2) եթե այդ փաստաթղթերը պարունակում են հանցագործությունների մասին տեղեկություններ:

Ամեն դեպքում, այդ փաստաթղթերը խուզարկությամբ վերցնելուց հետո դրանցում պարունակվող գաղտնիքը պետք է բացահայտվի բացառապես դատարանի որոշման հիման վրա:

Իհարկե, մեր նման դիրքորոշումն ուղղված է մի կողմից՝ գաղտնիքի պաշտպանությունն ապահովելուն, իսկ մյուս կողմից՝ գաղտնիք պարունակող տեղեկությունների ստացման դատավարական ձևն ապահովելուն, քանի որ հակառակ դեպքում ձեռք բերված ապացույցը չի հանդիսանա քրեադատավարական իմաստով թույլատրելի ապացույց:

12. Օրենսգրքի 172-րդ հոդվածի 3.2 մասը թույլ է տալիս ապահովագրական գաղտնիքը մեկնաբանել երկու ձևով՝ pro persona (անձի օգտին) և pro auctoritate (պետական մարմնի օգտին): Տվյալ դեպքում ստացվում է, որ pro persona մեկնաբանման դեպքում ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկությունը կարող է ստացվել միայն համապատասխան դատավարական կարգավիճակ ունեցող անձանց վերաբերյալ, իսկ pro auctoritate մեկնաբանման դեպքում այն կարող է ստացվել անկախ համապատասխան դատավարական կարգավիճակ ունենալու հանգամանքից:

Մեր կարծիքով, ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկությունների արժեքն այն աստիճան կարևոր ու բարձր չէ, որպեսզի դրանց նկատմամբ կիրառվի հասանելիության բարդ տեսակը, այն է՝ սուբյեկտային սահմանափակման երաշխիքը: Միանգամայն բավարար է դատարանի որոշման առկայությունը, այսինքն՝ կիրառելի պետք է համարվի պաշտպանվածության հարաբերական-բարդ ռեժիմը: Հակառակ դեպքում ապահովագրական գաղտնիքը գրեթե ձեռք է բերում բացարձակ պաշտպանվածության ռեժիմ՝ անհիմն սահմանափակելով հանրային շահը:

13. Առևտրային գաղտնիքի մասին նորմատիվ իրավական ակտ մինչև օրս չի ընդունվել, ավելին՝ օրենսդրորեն ամրագրված չէ առևտրային գաղտնիքի հասկացությունը, ինչը առևտրային գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման, այլ գաղտնիքներից առևտրային գաղտնիքի սահմանազատման համատեքստում քրեադատավարական պաշտպանության առումով առաջացնում է գործնական բարդություններ:

Օրենսգրքի 172-րդ հոդվածը կրում է «Ծառայողական և առևտրային գաղտնիքի ստացումը և պահպանումը» վերնագիրը, մինչդեռ հոդվածը կարգավորում է նաև այլ գաղտնիք կազմող տեղեկությունների ստանալու հետ կապված դատավարական հարաբերությունները: Այսինքն՝ հոդվածի վերնագիրն ակնհայտորեն չի համապատասխանում հոդվածի բովանդակությանը: Ավելին, հոդվածի վերնագրի և բովանդակության համադրումից կարելի է հասկանալ, որ, օրինակ, բանկային և ապահովագրական գաղտնիքները ներառվում են առևտրային գաղտնիքի մեջ:

Հարցի գործնական նշանակությունը կարևորվում է, քանի որ գաղտնիքի տեսակից է կախված պաշտպանվածության աստիճանը, ինչպես նաև՝ հասանելիությունը: Այլ կերպ՝ ՀՀ օրենսդրությամբ առևտրային գաղտնիքի հասկացության բացակայության պայմաններում առևտրային գաղտնիքն օժտված է պաշտպանության քրեական և քրեադատավարական պաշտպանության միջոցներով:

Մյուս կողմից՝ չնայած օրենսդիրը կարևորում է առևտրային գաղտնիքի պաշտպանությունը, սակայն այնչափ չի արժևորում առևտրային գաղտնիք կազմող տեղեկությունները, որպեսզի դրանց օժտի հասանելիության բարդ մեխանիզմով:

Առևտրային գաղտնիքի պաշտպանության քրեադատավարական հիմնախնդիրների մասին դատողությունների եզրահանգմամբ՝ կարելի է փաստել հետևյալը.

- վաղուց հասունացել է առևտրային գաղտնիքի օրենսդրական բնորոշման անհրաժեշտությունը, ինչպես նաև՝ առևտրային գաղտնիք կազմող և այլ գաղտնիքներ (բանկային, ապահովագրական և այլն) կազմող տեղեկությունների սահմանազատման մշակումը.

- Օրենսգրքի 172-րդ հոդվածի վերնագիրը պետք է համապատասխանեցվի հոդվածի բովանդակությունը: Օրինակ, հոդվածը կարելի է վերնագրել «Օրենքով պահպանվող այլ գաղտնիքների ստացումը և պահպանումը»՝ նկատի ունենալով, որ պետական գաղտնիքի պահպանման առանձնահատկությունները կարգավորվում են այլ հոդվածով:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Գաղտնիքը որպես սոցիալ-իրավական ինստիտուտ, «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր, թիվ 9-10 (243-244), Երևան, 2019, էջեր 78-83:

2. Փաստաբանական գաղտնիքի քրեադատավարական պաշտպանությունը մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում, «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր, թիվ 1-2 (247-248), Երևան, 2020, էջեր 88-101:

3. Բանկային գաղտնիքի քրեադատավարական պաշտպանությունը, «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր, թիվ 3-4 (249-250), Երևան, 2020, էջեր 72-83:

4. Քրեադատավարական միջամտությունից ապահովագրական գաղտնիքի պաշտպանության հիմնահարցերը, «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր, թիվ 5-6 (251-252), Երևան, 2020, էջեր 76-84:

5. Օրենքով պահպանվող գաղտնիքի հասկացությունը և էությունը, «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր, թիվ 7-8 (253-254), Երևան, 2020, էջեր 85-97:

6. Նախնական քննության գաղտնիքը՝ որպես օրենքով պահպանվող գաղտնիքի պաշտպանության քրեադատավարական միջոց, «Տարածաշրջան և աշխարհ» գիտավերլուծական հանդես, թիվ 5, Երևան, 2020, էջեր 68-75:

7. Օրենքով պահպանվող գաղտնիքի պաշտպանության էությունը, «Արդարադատություն» գիտական հանդես, թիվ 3 (52), Երևան, 2020, էջեր 20-28:

8. Գաղտնիքը՝ որպես սոցիալ-իրավական երևույթ, «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր, թիվ 9-10 (255-256), Երևան, 2020, էջեր 11-22:

9. Тайна (конфиденциальность) и уголовный процесс, «Scientific discussion», № 41, Vol. 1, Praha, Czech Republic, 2020, էջեր 46-51:

10. Уголовно-процессуальная защита тайны в англосаксонском праве, «Scientific discussion», № 43, Vol. 1, Praha, Czech Republic, 2020, էջեր 53-56:

11. Secrecy of criminal investigation in ECHR practice, «The scientific heritage», № 50, P.4, Budapest, Hungary, 2020, էջեր 39-42:

ПРОБЛЕМЫ ЗАЩИТЫ ОХРАНЯЕМОЙ ЗАКОНОМ ТАЙНЫ В УГОЛОВНОМ
ПРОЦЕССЕ РА

РЕЗЮМЕ

В ходе осуществления уголовно-процессуальной деятельности для раскрытия преступлений либо для всестороннего разьяснения обстоятельств его совершения органы уголовного преследования оказывают воздействие в отношении тайн, охраняемых законом, следовательно, более чем необходимы законодательные регулирования соответствующие принципу правовой определенности, которые не допустят двусмысленное, либо усмотрительное толкование норм, устанавливающих процессуальный порядок получения тайн, охраняемых законом. Вообще, законодательство Республики Армения не содержит общепризнанного определения тайны, наличие которого бы позволило составить четкое представление о тех критериях, ввиду которых информация получит режим секретности и охрану закона. Изучение законодательства РА показывает, что из всех охраняемых законом тайн, только сведения, составляющие государственную тайну, имеют высокий уровень защищенности, что нельзя утверждать по части “частных” тайн. Законодательством РА охраняются различные виды “частных” тайн, однако, они не имеют достаточный уровень защищенности и, в отдельных случаях, ввиду нечетких законодательных регулирований уголовно-процессуальное воздействие на них, неизбежно ведет к неравномерному ограничению прав лиц.

Объект исследования: Объектом исследования являются уголовно-процессуальные отношения, возникающие в связи с защитой тайны, охраняемой законом.

Предмет исследования: Предметом исследования являются внутригосударственные и международные правовые нормы, регулирующие отношения получения и использования охраняемой законом тайны, положения проекта Уголовно-процессуального кодекса Республики Армения, юридическая практика, а также международный опыт и теоретические источники.

Цель и задачи исследования: Целью исследования является систематическое изучение и анализ уголовного производства, связанного с получением и использованием охраняемой законом тайны, выявление теоретических и практических вопросов, их переосмысление, а также и разработка предложений по совершенствованию законодательства и юридической практики на основе результатов комплексного исследования.

Для достижения указанной цели поставлены следующие задачи:

- а) определить понятие охраняемой законом тайны;
- б) изложить свойства и суть защиты охраняемой законом тайны;
- в) дать определение защиты охраняемой законом тайны;

г) по результатам проведенного исследования предложить новую теоретическую классификацию охраняемой законом тайны;

д) определить понятие уголовно-процессуальных мер по защите охраняемой законом тайны;

е) предложить теоретическую классификацию охраняемых законом мер уголовно-процессуальной защиты;

ж) выявить теоретические и практические проблемы получения и использования охраняемых законом тайн в уголовном процессе, изучая сформированные на их основе судебную практику и международный опыт;

з) на основании результатов проведенного исследования разработать и представить законодательные и практические предложения, направленные на повышение защищенности охраняемой законом тайны.

Юридическая и эмпирическая основа исследования. Правовой и эмпирической основой исследования послужили нормативные правовые акты Республики Армения и других государств, касающиеся защиты охраняемой законом тайны, материалы судебной практики, в том числе – судебные акты Европейского суда, Суда Европейского Союза, Конституционного суда, Кассационного суда, Апелляционного суда РА, судов общей юрисдикции и судов других государств.

Научная новизна исследования. Диссертация является первым комплексным, законченным исследованием отечественного права, в котором сделана попытка максимально всесторонне обсудить и проанализировать теоретические и практические вопросы защиты тайн, охраняемых законом.

Были рассмотрены частично или практически не изученные проблемы отечественной уголовно-процессуальной литературы, а именно: законодательно-теоретическое разграничение терминов „охрана тайны“, „защита тайны“, дана классификация средств правовой защиты тайн, охраняемых законом, а также раскрыты проблемы совершенствования и повышения эффективности уголовно-процессуальных мер защиты тайны предварительного расследования, банковской тайны, тайны страхования, а также адвокатской и коммерческой тайны в рамках уголовного процесса. В результате были сделаны теоретические выводы, представлены законодательные и практические предложения.

PROBLEMS OF DEFENCE OF SECRET PROTECTED BY LAW IN CRIMINAL
PROCEDURE OF RA

SUMMARY

In the course of criminal proceedings, in order to disclose the crimes or to clarify the circumstances of their execution completely, the criminal prosecutors intervene in the secrets protected by law, thus it is more than important to have legislative regulations in compliance with the principle of legal certainty that will not allow double or discretionary interpretation of the norms defining the procedure of court proceeding for obtaining secrets protected by law. In general, there is no general concept of the secret protected by law in the Legislation of the Republic of Armenia which would give a clear idea what criteria should serve as a basis for the information to be classified as confidential and be protected by law. The study of RA Legislation shows that among the secrets protected by law only the information constituting a state secret has a high level of protection and the same cannot be asserted in the case of "private" secrets. Various types of "private" secrets are kept by RA Legislation; however they do not have a sufficient level of protection and in some cases, due to unclear legislative formulations, criminal intervention against them inevitably leads to disproportionate restriction of individuals' rights.

The object of research. The object of research is the criminal procedural relations arising in connection with the protection of secrets protected by law.

The subject of research. The subject of research is the intrastate and international legal norms, regulations of the draft Criminal Procedure Code of the Republic of Armenia, law enforcement practice, international experience and theoretical sources regulating the relations of obtaining and using the secrets protected by law.

The goal and objectives of the research. The goal of the research is the systematic study and analysis of criminal procedural relations arising from the acquisition and use of secrets protected by law, highlighting theoretical and practical issues, its reinterpretation, development of proposals aimed at improvement of legislation and law enforcement practice based on the results of comprehensive research. In order to achieve the above-mentioned goal a task has been set:

- a) to define the concept of the secret protected by law;
- b) to present the essence and features of protection of the secret protected by law;
- c) to give the definition of protection of the secret protected by law,
- d) to propose a new theoretical classification of the secret protected by law as a result of a research;
- e) to define the concept of criminal procedural measures for defence of the secret protected by law;

f) to propose a theoretical classification of criminal procedural measures for defence of the secret protected by law;


g) to highlight theoretical and practical issues of obtaining and using the secrets protected by law in criminal proceedings by studying the judicial practice and international experience based on them;

h) to develop and submit legislative and practical proposals aimed at increasing the protection of the secret protected by law based on the results of the conducted research.

Legal and empirical basis of the research. The legal and experimental basis of the research was the normative legal acts of the Republic of Armenia and other states related to the defence of the secrets protected by law, the materials of judicial practice, including the judicial acts of the European Court, the Court of Justice of the European Union, the Constitutional Court, the Court of Cassation, the RA Criminal Court of Appeal and Trial Courts of General Jurisdiction and courts of other states.

The scientific novelty of the research. The dissertation is the first comprehensive and complete scientific-research study of domestic law where an attempt has been made to discuss and analyze the theoretical and practical issues of defence of the secrets protected by law as comprehensively and in an integrated manner as possible.

Issues not fully studied or almost not studied in the domestic judicial literature, such as legislative and theoretical differentiation of the terms "protection of secret" and "defence of secret", classification of the measures of defence of the secret protected by law as well as the main issues of efficiency and improvement of criminal procedural measures for protection of the secrets of preliminary examination, banking, advocacy, insurance, commercial secrets have been studied. As a result, theoretical conclusions have been made and legislative and practical proposals have been presented.

A handwritten signature in blue ink, appearing to read 'A. Vanyan', is centered on the page. The signature is written in a cursive style with some underlines.